

## Ծնողական թույլտվություն հետազոտությանը մասնակցելու համար

Ձեզ խնդրում են թույլ տալ, որ ձեր երեխան մասնակցի հետազոտական ուսումնասիրությանը: Նախքան համաձայնելը, ձեզ պետք է տրամադրվի հետազոտական ուսումնասիրության ամփոփ նկարագրությունը: Այս ամփոփ նկարագրությունը պետք է պարունակի հիմնական տեղեկատվությունը՝ օգնելու ձեզ հասկանալ այն պատճառները, որոնց հիման վրա դուք կցանկանաք կամ չեք ցանկանա, որ ձեր երեխան մասնակցի այս ուսումնասիրությանը:

Նախքան համաձայնելը, հետազոտողը պետք է ձեզ հայտնի.

- (i) հետազոտության նպատակները, ընթացակարգերը և տևողությունը,
- (ii) ցանկացած ընթացակարգ, որը փորձարարական է,
- (iii) ուսումնասիրության ցանկացած ողջամիտ կանխատեսելի ռիսկերը, անհարմարությունները և օգուտները,
- (iv) ցանկացած հավանական շահավետ այլընտրանքային ընթացակարգերը կամ բուժումները,
- (v) ինչպես կպահպանվի գաղտնիությունը,
- (vi) ում դիմել հարցերի, բողոքների և վնասվածքների դեպքում:

Անհրաժեշտության դեպքում, հետազոտողը պետք է ձեզ նաև տեղեկացնի հետևյալի մասին.

- (i) ցանկացած հասանելի փոխհատուցման կամ բուժման՝ վնասվածք առաջանալու դեպքում,
- (ii) անկանխատեսելի ռիսկերի հնարավորության,
- (iii) այն հանգամանքների, որոնց դեպքում հետազոտողը կարող է դադարեցնել ձեր երեխայի մասնակցությունը,
- (iv) ցանկացած լրացուցիչ ծախսեր ձեր կամ երեխայի համար,
- (v) ինչ կպատահի, եթե որոշեք դադարեցնել ձեր երեխայի մասնակցությունը,
- (vi) երբ ձեզ կհայտնեն նոր բացահայտումների մասին, որոնք կարող են ազդել երեխայի մասնակցությունը թույլ տալու ձեր ցանկության վրա,
- (vii) որքան մարդ կմասնակցի ուսումնասիրությանը, և
- (viii) ինչպես դուք պետք է թույլ տաք օգտագործել ձեր երեխայի բժշկական տվյալները ուսումնասիրության համար:

Ձեր երեխայի մասնակցությունն այս հետազոտությանը կամավոր է, և ձեր երեխան չի ենթարկվի որևէ պատասխանատվության և չի կորցնի նպաստներ, եթե հրաժարվեք թույլ տալ ձեր երեխային մասնակցել կամ որոշում կայացնեք դադարեցնել նրա մասնակցությունը: Այս փաստաթղթի ստորագրումը նշանակում է, որ ուսումնասիրությունը, ներառյալ վերը նշված տեղեկատվությունը, ներկայացվել է ձեզ բանավոր, և որ դուք կամավոր համաձայն եք թույլ տալ ձեր երեխային մասնակցել: Եթե համաձայն եք թույլ տալ ձեր երեխային մասնակցել, ձեզ կտրվի սույն փաստաթղթի ստորագրված օրինակը և հետազոտության գրավոր ամփոփագիրը անգլերենով:

**Հարցեր**

Եթե ունեք հարցեր, բողոքներ, վնասվածքներ կամ այս ուսումնասիրության վերաբերյալ մտահոգություններ, կարող եք կապվել հետազոտողի հետ գրավոր ուսումնասիրության ամփոփագրում նշված հեռախոսահամարներով: Եթե ունեք հարցեր՝ որպես հետազոտության մասնակից ձեր երեխայի իրավունքների վերաբերյալ, կամ եթե ունեք հարցեր, բողոքներ կամ մտահոգություններ, որոնք չեք ցանկանա քննարկել հետազոտողի հետ, խնդրում ենք կապվել Յուտայի համալսարանի Ինստիտուցիոնալ գնահատման հանձնաժողովի գրասենյակի հետ՝ գրավոր ուսումնասիրության ամփոփագրում նշված հեռախոսահամարով կամ էլփոստով:

\_\_\_\_\_  
Երեխայի անունը

\_\_\_\_\_  
Ծնողի/խնամակալի անունը

\_\_\_\_\_  
Ծնողի/խնամակալի ստորագրությունը

\_\_\_\_\_  
Ամսաթիվ

\_\_\_\_\_  
Ծնողի/խնամակալի կապը երեխայի հետ

Ես հաստատում եմ, որ ներկա եմ եղել որպես թարգմանիչ՝ այս հետազոտական ուսումնասիրության համար համաձայնություն տալու գործընթացի ողջ ընթացքում: Հաստատում եմ, որ ես որակավորված եմ և ունեմ անհրաժեշտ հմտություններ՝ ծնողի/խնամակալի լեզվի և անգլերենի միջև թարգմանություն տրամադրելու համար: Ստորագրելով այս ձևը՝ ես հաստատում եմ, որ լիարժեք և ամբողջական թարգմանել եմ համաձայնություն ստացող հետազոտողի և մասնակցի ծնողի/խնամակալի միջև գրույցը՝ իմ առավելագույն հնարավորության սահմաններում:

\_\_\_\_\_  
Թարգմանչի անուն,  
ազգանուն

\_\_\_\_\_  
Թարգմանչի ստորագրություն

\_\_\_\_\_  
Ամսաթիվ